Հավելված N 90
Էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ. հուլիսի 26-ի N 636-Ա հրամանով

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) գյուղատնտեսական ծրագրերի նախագծման վարչության (այսուհետ՝ Վարչություն) գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետ (ծածկագիրը՝ 23-32.4-Մ2-6)

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի մյուս գլխավոր մանագետներից մեկը կամ Բաժնի ավագ մասնագետը:

1.4. Աշխատավայրը

Հայատան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան 5

2.Պաշտոնի բնութագիր

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. իրականացնում է գյուղատնտեսական հողերի մելիորատիվ վիճակի ուսումնասիրում և դասակարգում,
2. մասնակցում է գյուղատնտեսական հողերի մելիորացիայի (բարելավման), ոռոգման արդյունավետության բարձրացման ծրագրերի մշակման աշխատանքներին,
3. իրականացնում է գյուղատնտեսական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանն ուղղված իրավական, նորմատիվային փաստաթղթերի մշակում և դրանց իրականացումն ապահովող միջոցառումների մշակման աշխատանքներ,
4. իրականացնում է ոլորտին առնչվող հարցերի լուծման նպատակով կազմավորվող միջգերատեսչական հանձնաժողովների ու աշխատանքային խմբերի աշխատանքներին մասնակցություն,
5. իր գործառույթների շրջանակներում մասնակցում է Եվրասիական տնտեսական միությանը և ԱՊՀ անդամակցությամբ պայմանավորված աշխատանքային խմբերի քննարկումներին:

Իրավունքները՝

- ներկայացնել առաջարկություններ գյուղատնտեսական հողերի մելիորատիվ վիճակի բարելավմանն ուղղված գործողությունների վերաբերյալ,
- մասնկացել նոր տեխնոլոգիաների կիրառման, ոռոգման արդյունավետության բարձրացման ծրագրերի մշակման աշխատանքներին,
- գյուղատնտեսական հողերի մելիորատիվ վիճակի ուսումնասիրման և դասակարգման նպատակով տեղեկատվություն պահանջել համապատասխան

ստորաբաժանումներից և մարմիններից,
• մասնակցել իր գործառույթների շրջանակներում Եվրասիական տնտեսական միությանը և ԱՊՀ անդամակցությամբ պայմանավորված աշխատանքային խմբերի քննարկումներին:

Պարտականությունները՝

• ուսումնասիրել գյուղատնտեսական հողերի մելիորատիվ վիճակը և դասակարգել ստացված տեղեկատվությունը,
• մշակել գյուղատնտեսական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանն ուղղված իրավական, նորմատիվային փաստաթղթեր,
• տրամադրել ոռոգման ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ եզրակացություններ,
• ուսումնասիրել ջրային ոլորտի հետ կապված խնդիրները:

3.Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ գյուղատնտեսության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Կոնֆլիկտների կառավարում
2. Բանակցությունների վարում
3. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
4. Փաստաթղթերի նախապատրատում

4. Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ

մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: